ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐ. ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ՄԵՋ՝ ԸՍՏ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱԿՈԲ ՆԱԼՅԱՆԻ

ՎԱՀՐԱՄ ԼԱԼԱՅԱՆ

Մկրտությամբ մաքրվելով Քրիստոսի Արյամբ ու ձերբազատվելով անգամ մեղքի ադամական ժառանգությունից՝ մարդկային բնությունը կատարելապես չի առողջանում, այլ ենթակա լինելով ցավալի անկումների, իր հիվանդ բնույթը պարտադրում է անձին: Ու մինչ Ս. Հոգու շնորհով վերջինիս զորանալը և սեփական բնության սանձնահարումը (գոնե մահացու մեղքերի հաղթահարման չափով)՝ «ապաշխարության կոչը» մնալու է որպես աշխարհի ծովի մեջ տարուբերվող «մարդկային նավին» փրկության ափ հասցնող մշտավառ փարոս: Այս առումով, Աստծո խոսքը առաջին հերթին ապաշխարության գիտակցություն ձևավորելու առաքելություն ունի.

«Այս են գիրք ամենայն հոգեշունչ աւգտակարութեան,
Որ յաճախ ծնանին երկնաւոր պտուղս անճառս եւ զարմանալիս»[1]
Բան ԾԸ – (գ - 45–46)

Ըստ Գրիգոր Տաթևացու՝ ապաշխարությունը գործած մեղքերի համար ցավելն է ու ինքն իրեն պատժելը, անցյալի չարիքների համար արտասվելը և այլևս դրանք չկրկնելը[2]: Եկեղեցին ապաշխարության կարգը սահմանել է եռաստիճան ընթացքով. «զղջումն սրտի, խոստովանութիւն ի բերանոյ եւ ապաշխարութիւն գործոյ», որ թերահավատներին հաստատում է՝ հավատի, հուսահատներին՝ հույսի, իսկ Աստծու սիրուց հեռացածներին՝ սիրո մեջ[3]: Ըստ Գրիգոր Վկայասերի՝ զղջման և խոստովանության կարևորությունը դեռ հին իմաստասերներն էին շեշտում՝ «Մի՛ ծածկիր քո մեղքերը, այլ խոստովանիր, որ բժշկվես»,– ասում էր Պյութագորասը[4]: Ըստ Արիստոտելի՝ ով հեզությամբ խոստովանում է, հավասար

---

[1] *Գր. Նարեկացի. Մատեան Ողբերգութեան, աշխ. Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Երևան, 1995 (այսուհետև Նարեկի բոլոր հղումները կլինեն այս գրքից՝ բնագրից):*

[2] *Տե՛ս Գրիգոր Տաթեւացի. Գիրք հարցմանց (այսուհետև՝ Գրիգոր Տաթեւացի), Երուսաղէմ, 1993, էջ 601:*

[3] *Տե՛ս պատրիարք Յակոբ Նալեան. Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, հրեշտակական վարդապետին (այսուհետև՝ Նալեան), Կոստանդնուպոլիս քաղաքի, յամի Տէառն, 1745 դեկտեմբերի Իբ Հայոց ռճդ, էջ նիթ: Հմմտ. Գրիգոր Տաթեւացի, էջ 601:*

[4] *Տե՛ս Խրատանի ապաշխարության, աշխ. Աշոտ դպիր Արևշատյանի, Երևան, 2011, էջ 250:*

է լինում անմեղներին[5]: Եփրեմ Ասորու կարծիքով՝ խոստովանությունը Երկինքը բացող, մահվան դռներից փրկող, աստվածային սեղան հրավիրող, Տիրոջ Մարմնից սնող, պատվական Արյունից խմեցնող և տրտմածներին ուրախացնող է[6]:

«Մատեան ողբերգութեան» երկի մեջ ապաշխարության հոգին ամենաճշմարիտ ու շոշափելի կերպով է ներկայանում, քանի որ այն Նարեկա վանքի ճգնավորի կենդանի կյանքի ապրումից է բխում.

«Զաւրացո՛ զբանս զղջման՝ առաքեալ ի մեզ զՀոգի ի բարձանց
Աստուածաշունչ պատգամաւքս ի սմին եղելոցս»
Բան Բ – (բ - 72–73),

որպեսզի այն փոխանցվի նաև ընթերցողներին. «զի որք ընթեռնեցուն՝ ընկալցին ի Քէն զշնորհ զղջման…»[7]: Սակայն Նարեկացու հոգում ներքին տագնապ կա.

«Մի՛ լիցի ինձ երկնել եւ ոչ ծնանիլ»
Բան Բ (գ-83)

Այսինքն՝ սրտի խորքում զղջալ, բայց կատարյալ ապաշխարության չհասնել՝ ըստ Հուդայի զղջման օրինակի[8],

«Խորհել, եւ ո՛չ հառաչել» Բան Բ (գ-85)՝ *մեղքերի համար մտատանջվել, բայց չկարողանալ հառաչել ու սիրտը թեթևացնել[9],*
«Ամպել եւ ոչ անձրեւել» Բան Բ (գ -86) ՝ *մեղքերի համար տրտմել, տխրել և չկարողանալ արտասվել ու սրբվել[10]:*

Ըստ քրիստոնեական ճգնակեցության հայտնի տեսաբան Ս. Զարինի՝ ապաշխարությունը մարդու համար լոկ ինքնամերժման ընթացք չէ, այլ Աստծո սիրո բացահայտման հնարավորություն, երբ մեղավորը հավատում է, որ Աստված կարող է իրեն ներել և «անառակ որդու» հոր նման՝ դիմավորել որպես հարազատի[11]: Այլ խոսքով՝ Աստված որպես սիրող Հայր, Մայր Եկեղեցու թևերով միշտ պատրաստ է ընդունել իր անառակ որդիներին՝ զղջա-

---

[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 273: Խոստովանության մաքրագործող զորության մասին տե՛ս նաև՝ Ս. Գրիգոր Լուսավորչի հարցումները հրեշտակին, թարգմ. Հ. Քեռսեյանի.– Տեսիլքներ և մարգարություններ հայոց մասին, Երևան, 2009, էջ 102–109:*

[6] *Տե՛ս Խրատանի ապաշխարության, էջ 250:*

[7] *Նալեան, էջ 32:*

[8] *Տե՛ս նույն տեղում, էջ 35:*

[9] *Տե՛ս նույն տեղում, էջ լգ:*

[10] *Տե՛ս նույն տեղում:*

[11] ***Տե՛ս*** С. Зарин. Аскетизмъ по православно-христианскому учению. СПб., 1907, с. 549.

ցող հավատացյալներին՝ Քրիստոսի Արյամբ սրբագործելու, վերանորոգելու, մեղքի տիրապետությունից ազատագրելու համար:

Ունենալով աներկբայելի հավատ ու զորավոր սեր՝ Նարեկացին հույսով Աստծուն է դիմում որպես պարտապան՝ մեղադրելով իրեն հոգևոր անպտղության մեջ.

«Սրբեա՛ ի պարտեաց…». Բան Բ (դ-106)

քանզի բազում շնորհներ փոխ առի, որպեսզի շահեմ և առաքինությամբ փոխհատուցեմ, սակայն բոլորը վատնեցի[12]:

Աստված երկիրն արարեց իբրև մարդու բնակատեղի, իսկ նրա հոգին՝ որպես Իր բնակավայր[13]: Բայց մարմնական կենցաղավարության ու մեղքի պատճառով Ս. Հոգին հեռանում է մարդուց [ըստ այն խոսքի, որ «Իմ ոգին յաւիտեան թող չմնայ այդ մարդկանց մէջ, որովհետեւ նրանք մարմնաւոր են» (Ծննդոց Զ. 3)][14]:

Ըստ Նարեկացու խոստովանության՝

«Ոչ ետու հանգիստ Քո Հոգւոյդ ի մարմնեղէնս տաղաւարի
Ո՛չ ընդ բնութիւն շնչոյս խառնեցի զմասն շնորհաց Քումդ
պարգեւի»
Բան Ե– (է - 87–88)

Ըստ Գրիգոր Տաթևացու՝ խոստովանությունը կտրում է սրտից մեղքերի արմատները և զղջացողին հաստատում Աստծո կամքի մեջ՝ մտքի մեջ ամրագրելով չմեղանչելու վճիռը[15]: Որպես ուսուցիչ և խորհրդապաշտ ճգնավոր, Նարեկացին հստակեցնում է նաև ճշմարիտ ապաշխարության հոգեպատկերը՝ իբրև արքայական միջին ճանապարհ.

«Քանզի միապէս մատնէ կորստեան
Եւ զղջումն ուժգնապէս, եւ մեղանչելն մոլեգնաբար»
Բան Ժ– (ա - 1–2)

Առաջին դեպքում («զղջումն ուժգնապէս»)՝ ընկնելով հուսահատության մեջ, ծայրահեղ անհուսաբար զղջացողը սահմանափակում է «ողորմած Աստծո» մեղքերի ներման (թեկուզ և ծանր) կարողությունը և «արդար Աստծո» մեծահոգությունը չպատկերացնելով՝ անհնարին համարում իր սրբվելու հնարավորությունը:

---

[12] *Տե՛ս Նալեան, էջ լէ:*

[13] *Տե՛ս Ս. Մակար Մեծ «Խրատներ», թարգմ. ռուսերենից Ա. Գ. Ալեքսանյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 12:*

[14] *Տե՛ս Նալեան, էջ լէ:*

[15] *Տե՛ս Գրիգոր Տաթեւացի, էջ 603:*

Մոլեգնաբար մեղանչողը, ընդհակառակը՝ սնեռվելով Ողորմած Աստծո վեհանձնության վրա՝ անհոգաբար մոռանում է «արդարադատ Տիրոջ» առջև անխուսափելի պատասխանատվության իրողությունը և թերի զղջմամբ՝ չազատվելով մեղքերի բազմությունից ու ծանրությունից, կործանվում. «թէ զարդարութիւն Նորա միայն մտածիցեմք՝ ի ժամու զղջման՝ անկանիմք ի յուսահատութիւն, եւ թէ զողորմութիւն միայն՝ անկանիմք ի մոլեգնաբար մեղանչումն»[16]: Աստծո արդարության կամ արդարադատության մասին խորհելիս՝ մարդու սրտում երկյուղ է ծնվում, իսկ ողորմության կամ ողորմածության մասին մտածելիս՝ հույսն է արթնանում[17]:

Արդար է Աստված ու Ողորմած, և ըստ անձի վրա ունեցած ազդեցության, մարդու հոգեկան բնությունը հավասարակշռվում է երկյուղով ու հույսով: Այս ամենից բացի, Ս. Հոգու շնորհը՝ մի կողմից մարդու բնությունն է զորացնում մեղքերի դեմ պայքարում, մյուս կողմից հավատ ներշնչում Ողորմած Աստծո մեծահոգության հանդեպ.

«Եթէ կշռեսցես զմեղանաց իմոց ծանրութիւն՝
Ընդ քաղցրութեան Քո եւ Մի՛ ընդ արդարութեան»
Բան ԺԶ – (բ - 40–41),

քանզի Աստծո ողորմությամբ ու քաղցրությամբ թեթևանում է մեղքերի ճնշումը անձի վրա, իսկ արդարությամբ՝ ծանրանում[18]:

Մարդկային հոգու կորստյան գործում անտեսանելի դերակատարություն ունի նաև սատանան, որ «նախ յուսացուցանէ՝ ձեւակերպելով զԱստուած ողորմած, եւ յետ մեղանչելոյն յուսահատ առնէ՝ ձեւակերպելով զԱստուած խստագոյն արդար»[19]:

Ապաշխարության ընթացքը թեև կարող է մարդուն ազատել գեհենի կրակից, սակայն խորհրդազգածի համար գլխավորը Աստվածության հետ հաշտությունն է և որդեգրության շնորհի մեջ վերահաստատումը.

«Ընկալ եւ մատո՛, քաւեալ եւ սրբեալ զիս՝ զամենապարտս
Բանդ կենդանի, առ հաւասարապատիւ Քո Հոգի,
Զի Քեւ վերստին հաշտեալ յիս դարձցի,
Եւ ի ձեռն Քո իւրովն կամաւք մաքուր նուիրեալ,
Զաւրեղն ինքնութեամբ զիս Հաւր ընծայեալ…»
Բան Իդ – (դ - 76–80)

---

[16] Ն ա լ է ա ն, էջ ձէ:
[17] Տե՛ս նույն տեղում:
[18] Տե՛ս նույն տեղում, էջ 123:
[19] Նույն տեղում, էջ 87:

Ապաշխարության խորհրդի անբաժանելի մաս կազմող զղջումն ու խոստովանությունը, սուգն ու արտասուքը, Աստծո Որդու հեղած սրբագործ Արյան հանդեպ հավատի առկայությամբ, մեղքերից ձերբազատվելու ամենակարճ ճանապարհն է, որ իր լրումն է գտել «Մեղայ Աստուծոյ» արտահայտության մեջ.

«Կական եւ հեծութիւն, հառաչանք կողկողագինք,
Դառնութեան լալումն եւ արտասուաց երգ,
Դարձեալ սկսայց զճառ պաղատանացս
Խոստովանաւրէն, զղջականաբար
Զգաղտնածածուկն՝ հայտնաբարբառ…»
Բան Իէ – (ա - 3–7)

«Մեղա»-ն առաջին հերթին հոգևոր դարձ է, աշխարհից երկինք ձգվող «կենդանութեան կամուրջ» *Բան Իէ* (գ-27)*, անցում «Եգիպտոսից աւետեաց երկիր»*[20]*,* «անխզելի կապ» *Բան Իէ (գ-29), որ «զմեզ ընդ Աստուծոյ կապէ եւ զԱստուած ընդ մեզ»*[21]*, նախնյաց կողմից տրված* «պատուելի աւանդ», «անմոռաց պատուէր» *Բան Իէ* (գ-24)*, մինչև գերեզման մարդու ուղեկից*[22]*: Ըստ Նալյանի՝ «Մեղայ»-ի* «սրտաբեկ հնչումը» *Բան Իէ* (գ-31)*, ցնցելով մեղավորի ներքնաշխարհը, գութ է առաջացնում Աստծո սրտում՝ խստապահանջ դատավորից դարձնելով (Նրան) սիրող հայր*[23]*: Այսուհանդերձ, «մեղայ»-ի բանաձևը «խորհրդական մեգով» է պատված, որը մտքի համար անհասանելի է.*

«Խորհուրդ կնքեալ, ընդ որ չիք ումեք անցանել,
Եթէ ոչ անընմբռնելի մտաց արագման զսա ծանիցէ»
Բան Իէ – (գ - 38–39)

Ինչպէ՞ս է զղջման այս փոքրիկ արտահայտությունը խոստովանությամբ ջնջում ժամանակի «հսկայական տարածքներ» ընդգրկող ծանր մեղքերն ու տարաբնույթ հանցանքները, մտքի համար անընկալելի է՝ նման Մովսեսի համար «հիացման տեսիլ» Բան Իէ (գ-37)*, դարձած վառվող մորենուն, որ խորհրդանշելով Աստծո սերը՝ վառվելով չէր սպառվում ու բնաջնջվում*[24]*:*

Անճառելի է Աստված, անհասանելի, արդար, հավիտենական, անմահ Սուրբ Էություն, սակայն, երբ մեղավորը «մեղա» է ասում, ապա որպես «Կենաց ծառի» տիրակալ, կարեկցում է և ողորմության պտուղներով կերակրում՝ չթողնելով, որ նա մահանա[25]*:*

[20] *Տե՛ս նույն տեղում, էջ 189:*
[21] *Նույն տեղում:*
[22] *Տե՛ս նույն տեղում, էջ ճձթ-189:*
[23] *Տե՛ս նույն տեղում, էջ ճղ:*
[24] *Տե՛ս նույն տեղում, էջ ճղա:*
[25] *Տե՛ս նույն տեղում, էջ 195:*

Սակայն «մեղա»-ն մոգական բանաձև չէ, որ նույնիսկ Աստծուն է «ստիպում» ներել և զիջել, այլ՝ ապաշխարության տանջալից ընթացքի որոշակի հանգրվան: Թերևս, ամենադժվարը «մեղա»-ի ճշմարիտ հոգեվիճակին հասնելն է, որն ընդունելի կլիներ Աստծո համար: Վերջինս իրագործելի է միայն Ս. Հոգու շնորհի և անհատական ջանքերի համագործակցության պարագայում, ապաշխարության պտուղների հասունացման արդյունքում՝ աղոթական նրբարվեստի անճառելի զորությամբ: Աստված չընդունեց Սավուղի կամ Հուդայի զղջման մեղան, քանի որ այն հոգու ամայությունից էր բխում և ոչ Աստծո սիրուց: Նարեկա վանքի ճգնավորը ինքնադատաստանի շավիղներով է մոտենում կատարյալ «մեղայ»-ի մատույցներին՝ իրեն անարժան համարելով Աստծո սիրուն, գթությանը, Նրանից ճառագող իմաստության լույսին, Ս. Հոգու շնորհների ձրի պարգևներին, Աստծո Որդու Մարմնին ու Արյանը.

«Մեղա՛յ Մեծիդ բարերարութեանը, անարգս մեղայ…
Մեղա՛յ շնորհացդ անբաւ երախտեաց, արդարեւ մեղայ…
Մեղա՛յ գովեալ Մարմնոյդ Աստուծոյ, մահու չափ մեղայ
Մեղա՛յ պաշտելի Արեան Արարչիդ, իսկապէս մեղայ»
Տե՛ս Բան ԻԷ – (բ - 11–21)

Ըստ Տաթևացու՝ մեղքի հանդեպ ատելությունը արտահայտվելով սրտի զղջումով ու խոստովանությամբ, արդեն ամոթի պատիժ է ենթադրում[26]*:*

Իսկ Նարեկացու համար. «…Նզովս իրաւացիս, անէծս արժանահատոյցս՝
Արդ, այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք
Եւ ինքնահարուած տանջաւորութիւնք»
Բան ԻԷ – (զ - 95–97)

Ըստ Նալյանի՝ Նարեկացին ասում է, որ ատեց, կշտամբեց ու դատապարտեց իրեն, որպեսզի Աստծուց քավություն գտնի ու ներում[27]*: Ապաշխարության հոգեվիճակը, ըստ Ս. Զարինի, հավատացյալի կյանքում այսպիսի դրսևորումներ է ունենում՝ ինքնադատապարտում, վճռական անհամաձայնություն և հրաժարում սեփական մեղսածին կենսակերպից, համոզվածություն բարձրագույն կատարելատիպի և այլ իրականության գոյության հանդեպ, արմատական վերափոխման ձգտում, որ պիտի հանգեցնի սրբակեցության և Բարձրագույնի հետ հաղորդակցության*[28]*: Խորհուրդների պատերազմում ճգնավորի արիության չափանիշը հոգևոր արթնությունն է, համառությամբ մարտնչելու անկոտրում կամքը:*

---

[26] *Տե՛ս Գրիգոր Տաթեւացի, էջ 603:*
[27] *Տե՛ս Նալեան, էջ 199:*
[28] *Տե՛ս* С. Зарин. *Նշվ. աշխ., էջ 551:*

Գր. Նարեկացու համար որևէ մեղքի խոստովանության մոռացումն արդեն պարտության, ծուլության, ներքին հիվանդության ինքնաբացահայտում է. «ասա՛ զանօրէէնութիւնս քո՝ զի բժշկիցիս» (Եսայի, Խգ -26):

Բայց դժվար է ապաշխարության ուղին՝ մռայլ, ցավալի, ինչ որ առումով՝ սոսկալի, իսկ աստվածային ընկալման տեսանկյունից՝ ցանկալի, բժշկարար, լուսավոր ու հեշտալի.

«Որ ինձ անհնարին է, Քեզ դիւրին է…
Որ ինձ հեծութեանն է, Քեզ խնդութեանն է…
Որ ինձ մռայլն է, Քեզ ճառագայթ է…
Որ ինձ սոսկալին է, Քեզ հեշտալի է...»
Բան ԾԷ – (ա - 11–28)

Ապաշխարության դժվարությունների հաղթահարմանը նպաստում է Աստծո հանդեպ զորավոր սիրո զգացմունքը, երբ հավատացյալի սրտում աստվածասիրությունը հաղթում է եսասիրությանը: Ապաշխարության մեջ, ըստ Զարինի՝ բարոյական շրջադարձի էությունը կայանում է կյանքի ծանրության կենտրոնը սեփական անձից Աստծո և մերձավորների վրա փոխադրումը կամ սեփական կամքից հրաժարումը (որ Քրիստոսին հետևելու նախապայման է, քանզի պատվիրեց խաչակրությամբ իր ճանապարհն անցնել. հմմտ. Մատթ., ԺԶ-24)[29]:

Ճշմարիտ ճգնավորը ոչ միայն արդարացի է համարում իրեն հասած վշտերը, տառապանքներն ու տանջանքները, այլև օգտակար՝ մեղքերի քավության և անկրքության որոշակի աստիճանի հասնելու համար: Այս ընթացքը կարգավորվում է քրիստոնեական պահեցողության կամ պահքի կենսակերպով, որը ճգնավորական կենցաղավարության բուն առանցքն է:

Այստեղ ևս Նարեկացին ինքնադատապարտյալ է՝ ինչպե՞ս.

«… գրգեալս ապականացու փափկութեամբ»
ասեմ. «Թէ՝ խոնարհեցուցի պահաւք զանձն իմ»
Բան Կ – (է - 130–132)

Թվում է, թե ճգնավորական կենցաղն ու պահքը «աղոթքի թևերով» վանականին պիտի հասցնեն աստվածպաշտության նոր բարձունքների՝ բացառելով անկման հնարավորությունները, բայց իրականությունն այլ բան է ասում: Այս անգամ Նարեկացին իրեն հանդիմանում է որպես աստվածապաշտության կերպարանք ընդունած մեղսասերի, որին տանջում է երկմտությունը.

«Ճեպեցայ ի տաւնս Բահաղու եւ ոչ Աստուծոյ,

[29] *Տե՛ս նույն տեղում, էջ 553:*

Ի յերկուս հետս երկմտութեան կրկին կաղացի…»
Բան ԿԴ – (գ - 42–43)

Այսինքն՝ ասում է, որ իր մեղքերը կուռքերի պես պաշտեց ու առավել դեպի մեղքերն ընթացավ, քան Աստծո պաշտամունքին[30]: Իսկ երկմտությունը ի հայտ է գալիս Աստծո ողորմածությունից ճառագող հույսի և մեղքերի բազմությունից ու ծանրությունից առաջացած անհուսության բախումից[31]: Ամեն դեպքում, դեպի սրբություն և առաքինություն տանող ճանապարհը կասկածի ստվերների միջով է անցնում:

Իսահակ Ասորու կարծիքով՝ առաքինության մեջ ապրելը խաչակրություն է, քանզի այն հանդիպում է դաժան ու սաստիկ վշտերի[32]: Ըստ Նարեկացու.

«Ինձ ի փրկութիւն եւ ի մաքրութիւն,
Եւ Քեզ՝ ի հաճութիւն ընդունելութեան»:
Բան ԿԴ – (դ - 66–67)

«Լեռան քարոզ»-ում Քրիստոս երանի տվեց սգավորներին, քանզի նրանք հաստատվելով «սգավորության առաքինության» մեջ (արտասուքով, հառաչանքով ու հեծեծանքով մաքրագործելով իրենց բնությունը) Ս. Հոգու շնորհով արժանի պիտի դառնան Աստծո հետ սիրո միավորության ու մխիթարության[33]:

Սակայն ապաշխարողի արտասուքները կարող են արժեզրկվել, եթե այն զուգակցված չէ խոստովանության հետ: Ըստ Նարեկացու.

«Ահա զանճառիցն իմոց ճառեցի,
Զպատկառելիսն խայտառակեցի,
Զգաղտնիսն հրապարակեցի…
Զդառնութեանս մաղձ ժայթքեցի»
Բան ԿԵ – (ա - 5–7, 11)

Խոստովանում է, որ իբրև ամենամեծ մեղավոր, ըստ մարդկային կարողության՝ իր անճառելի մեղքերը հայտնեց, գաղտնիքները հրապարակեց, մեղքերի մաղձը փսխեց[34]: Խոստովանությունների շարունակության մեջ Նարեկացին բացահայտում է նաև մեղքի աղբյուրի ինքնության հասցեն.

«Զգործակցութիւն չարին մատնեցի…

---

[30] *Տե՛ս Ն ա լ ե ա ն, էջ 471:*

[31] *Տե՛ս նույն տեղում:*

[32] *Տե՛ս Խրատանի ապաշխարության, էջ 293:*

[33] *Տե՛ս Վ. Լ ա լ ա յ ա ն. Ինը երանիները հայ խորհրդաբանական ավանդույթի մեջ.– «Էջմիածին», 2009-Ժ (հոկտ.), Ս. Էջմիածին, էջ 25–27:*

[34] *Տե՛ս Ն ա լ ե ա ն, էջ նույն:*

Զպատրուակն կեղծեաց առի, …
Զդաշն կործանողին կտրեցի,
Զուխտն խաբողին ցրուեցի»
Բան ԿԵ – (ա - 12, 15, 32–33)

Այսինքն, ըստ Նալյանի՝ Նարեկացին բացահայտելով սատանայի հետ իր համագործակցությունը (մեղսանկման ընթացքում), միաժամանակ խոնարհական խոստովանությամբ ապացուցում է իր բնության արդար ու մեղսատյաց լինելը[35]*:*

Ճշմարիտ ապաշխարությունը ենթադրում է ոչ միայն հոգեկան, հոգեբանական տառապանք, այլև մարմնական չարչարանք.

«Յանձինս վտանգ ոչ անխայեցի
Մարմնոյս սիրոյ ոչ աչառեցի»
Բան ԿԵ – (ա - 21–22)

Այստեղ Նալյանը ավելի շատ վերաշարադրում է Նարեկացուն, քան մեկնում, ըստ որի՝ ճգնավորը շեշտում է, որ իր հոգին չխնայեց, այլ տրտմեցրեց ու վախեցրեց դժոխքի և մահվան երկյուղով, ու մարմնի սիրուց էլ հրաժարվեց՝ չարչարելով ապաշխարությամբ[36]*: Այլ խոսքով, Նարեկացին Աստծո սերը գտնելու համար մերժում է աշխարհի սերը, քանզի ըստ Հովհաննես առաքյալի՝ «եթէ մէկը սիրում է աշխարհը, Հօր սէրը նրա մէջ չէ…» [Ա Յովհ. (Բ-16)]: Ս. Զարինը մարդու աշխարհասեր վարքի համար հոգեբանական եզր է օգտագործում՝ եսասիրություն*[37]*: Ըստ նրա մեկնաբանության՝ մեղսական եսասիրությունը կարող է արդեն անձի հավիտենական կորստյան պատճառ դառնալ, քանի որ մարդը Աստծո կամքը չփնտրելով, իր հիվանդ բնության ցանկությունների զոհն է դառնում*[38]*: Սարգիս Շնորհալին աստվածասիրությունն ու անձնասիրությունը իրար չի հակադրում, այլ գտնում է, որ ապաշխարությունն ու խաչակրությունն է (իր անձի հանդեպ) իրական սերը, քանի որ այս ընթացքն է միայն մարդուն փրկելու դժոխքի տանջանքներից և Վերջին Դատաստանի սարսափներից*[39]*: Կյուրեղ Ալեքսանդրացին խոր վշտով է արտահայտվում այն հավատացյալների մասին, որոնց աշխարհասիրության ալիքները քշել-տարել են. «ավա՛ղ Աստծո որդեգրությունը թողնողներին և աշխարհի հաճույքներին տրվողներին»*[40]*:*

Խոստովանողի համար դժվար է նաև իր «մեղաց հնությունների» պեղումն ու ժամանակի փոշու շերտերում խոր թաղված նեխած գարշահոտության վերարծարծումը.

---

[35] *Տե՛ս նույն տեղում:*
[36] *Տե՛ս նույն տեղում, էջ 474:*
[37] *Տե՛ս* С. З а р и н. *Նշվ. աշխ., էջ 557:*
[38] *Տե՛ս նույն տեղում:*
[39] *Տե՛ս Խրատանի ապաշխարության, էջ 308–309:*
[40] *Նույն տեղում, էջ 208:*

«Զարմատն հնութեան տեսիլ արարի»
Բան ԿԵ (ա - 23)

Այսինքն՝ հնություն դարձած մեղքերիս արմատները, որ ծածկված էր հոգուս խոր վիհերում՝ ի հայտ բերեցի[41]*:*

Խոնարհաբար խոստովանելով մեղքերը, մարդը կործանում է իր սրտում կառուցված հպարտության ու ամբարտավանության աստվածամարտ ամրոցը. «Զդղեակ սրտիս քանդեցի» *Բան ԿԵ (ա - 26):* Ըստ *Շնորհալու՝ սրտիս ամբարտավանության դղյակից մարտնչում էի Աստծո դեմ… և խոնարհությամբ՝ քանդեցի*[42]*: Ճգնավորի պայքարը նաև մարմնական ցանկությունների կամ մարմնի չար կամքի դեմ է, որ չի ուզում հնազանդվել Ս. Հոգուն.*

«Ընդ կամացս որսոյ, իբր ընդ դարանակալի մահու, կռուեցայ»
Բան ԿԵ (ա - 27)

Ըստ Նալյանի՝ մարմնի կամքի դեմ, որ դարանակալ էր հոգուս՝ հեշտությամբ և ցանկասիրությամբ, կռվեցի[43]*: Այս իրավիճակում, ըստ Զարինի՝ մեղավորի եսակենտրոն գիտակցությունը դառնում է աստվածակենտրոն, քանի որ կամքը զոհաբերվում է Աստծուն*[44]*:*

Վերջին Դատաստանին (կամ մարդու մահից հետո) սատանան, դատախազի նման ցույց տալով նրա մեղքերը, դատավորի (Քրիստոսի) առջև ամբաստանելու է… և ճգնավորի խնդիրն է, Երկրի վրա մեղքերի դեմ արյուն թափելու աստիճան պատերազմելով, ապացուցել, որ ինքը իր անձի թուլության պատճառով է մեղքի մեջ ընկել ու դարձել չարի կամակատար՝ այսպես մեղքի արմատը հասցնելով մինչև սատանա, այսինքն՝ մեղադրող[45]*.*

«Զդատախազն դատաւորին հանդէպ կացուցի…»
Բան ԿԵ (ա - 30)

Մեղքի դեմ պայքարում մեծ ու փոքր հաղթանակներն ու ապաշխարության պտղաբերության գործում որոշակի հաջողությունները չկապելով իր անձի հետ, Նարեկացին Աստծուն է վերագրում ոչ թէ հպարտության մեջ չընկնելու երկյուղից, այլև ճշմարտության առջև

---

[41] *Տե՛ս* Ն ա լ է ա ն, *էջ 474: Նարեկացու խոստովանական արտահայտությունը Բան ԿԵ (ա-23)-ում Ներսես Շնորհալու մոտ այսպիսի ձևակերպում է ստանում.*

«Զիմ պատառեա՛ զհնութիւն չարին

Զնջեա՛ ըզգիր՝ մեղացս անձին» (տե՛ս Գիրք որ կոչի Յիսուս Որդի, շարադրեալ ի մերս Շնորհալի Հայրապետէ՝ ի Ներսիսէ Կլաեցւոյ, ի Կոստանդնուպօլիս, յամի Տեառն, 1824, էջ 141):

[42] *Տե՛ս* Ն ա լ է ա ն, *էջ 474:*

[43] *Տե՛ս նույն տեղում:*

[44] *Տե՛ս* С. З а р и н. *Նշվ. աշխ., էջ 550–551:*

[45] *Տե՛ս* Ն ա լ է ա ն, *էջ 474:*

չմեղանչելու գիտակցությունից, քանզի, ըստ «Հայր մեր»-ի Աստծուց է բարի կամքը, Նրանն է զորությունն ու փառքը, Նրանից էլ տրվում են բոլոր բարի պտուղները՝ թե՛ ապաշխարության, թե՛ հաղթության: Հակառակ դեպքում չարի զորությունները ուժեղ լինելով մարդուց՝ չէին պարտվի և կփախցնեին ապաշխարության պտուղները: Այս իրավիճակում մեծ իմաստունը ապաստան է փնտրում Աստծո մեջ.

«Զկատարած մարտին յաղթութեան ի Քեզ, տէր Յիսուս, ապաստանեցի»
Բան ԿԵ (ա - 34)

Որպես հոգևոր պատերազմի իսկական մարտիկ, Նարեկացին մատնանշում է նաև իր թերացումները՝ սատանային ու նրա զորքերին դիմակայելու գործում: Սա արդեն ռազմիկի ոգով խոստովանություն է: Խոսքը առաջին հերթին վերաբերում է սպառազինությանը և մարտավարությանը.

«Ոչ դիմաց ետու զգուշութիւն
Եւ ոչ թիկանց՝ պատսպարութիւն»
Բան ԿԸ – (գ - 46–47)

Հնում զինվորները իրենց դեմքը պաշտպանում էին սաղավարտով, իսկ թիկունքը՝ զրահով (այսպիսի սպառազինություն և հանդերձանք, անկասկած, առկա էր Պողոս առաքյալի գործունեության ժամանակաշրջանից մինչև Նարեկացու ժամանակները բոլոր հանրահայտ պետությունների բանակներում): Պողոս առաքյալը սաղավարտը համարում էր փրկության խորհրդանիշ և պատճառ, իսկ զրահը՝ արդարության[46] (հմմտ. Եփես., Զ-14):

Ըստ Նալյանի՝ Նարեկացին բողոքում է, որ իր գլխին չպահեց սուրբ հավատը՝ փրկության սաղավարտը և արդարության զրահ չհագավ կամ առաքինի վարք չունեցավ[47]: Ըստ Նարեկացու.

«Ոչ աջոյս իմ՝ զինուորութիւն
Եւ ոչ ահեկիս՝ պարածածկութիւն
Որով ի պատերազմիս վտանգէ զերծայց»
Բան ԿԸ – (գ - 48–50)

Բան ԿԸ-ում Նարեկացին շարունակում է խոստովանական ընթացքը՝ մեղքերի տպավորությունները համեմատելով գարշանք առաջացնող գորտերի հետ.

«Տաղտկատեսակ գարշութիւն գորտոցն զիս զազրացուսցեն»
Բան ԿԸ (ե - 96)

---

[46] *Տե՛ս նույն տեղում, էջ նդդ:*
[47] *Տե՛ս նույն տեղում:*

Ապաշխարության ընթացքը և «փրկության ափ» հասնելը չպետք է նկատել որպես ճգնավորի կողմից սեփական զորությանն ապավինած նավարկություն: Դա կնշանակեր փոթորկոտ ծովում աստվածային հույսի նրբաձայն լարի նվագը չլսել և վարձկանի նման հույսն իր վաստակի վրա դնելով, մեկուսանալ Ս. Հոգու շնորհից, և արդեն Աստծո ողորմության կարիքն էլ չունենալ: Այս դեպքում, ապաշխարությունը, մեղքերից ազատագրումը, և, ի վերջո, փրկությունը՝ կխորհրդազերծվեր և գուցե Քրիստոսի չարչարանքների ու հեղած Արյան կարիքն էլ չզգացվի… Ըստ Եկեղեցու վարդապետության՝ Աստված է սրբողն ու Աստված է փրկողը՝ իր մեծ ողորմության շնորհով: Իսկ վարձկանի հոգեբանությունը, որ առևտրական հոգուց է բխում, աստվածահաճո չէ.

«Ահա՛ անդ է ողորմելն իսկապէս
Յորում հատաւ ակնկալութիւն վաստակոյն»
Բան ՀԴ – (ա - 4–5)

Ըստ Նալյանի՝ Նարեկացին նշում է, որ վաստակ և բարի գործ ունենալու դեպքում ինքը կնմանվեր վարձկանի և ոչ շնորհընկալի[48]: Վարձկանական մտածողությունն արդեն վտանգավոր է, քանզի դյուրագայթ բնություն ունենալով, անձը հեշտությամբ կարող է կորցնել իր վաստակը, որի վրա էր իր հույսը: Այսպես ճգնավորը կհայտնվի հուսահատության ծովում, որտեղ չխեղդվելու հնարավորությունն ու փրկության ելքը խիստ կասկածելի է: Այս կացությունից դուրս գալու միակ ճանապարհը խոնարհագույն հոգով, փշրված սրտով Աստծո ողորմությունը խնդրելն է: Ըստ Հովհան Մանդակունու՝ «Իսկ ես չարի բազում նետերից վիրավորվեցի և հաղթվելով պարտվեցի, խոստովանում եմ իմ պարտությունը և ծանուցում իմ ամբարշտությունը, պատմում եմ իմ անթիվ մեղքերը և ողբում իմ ահեղ անօրինությունները»[49]: Իսկ ըստ Նարեկացու.

«Եւ արդ, յամենուստ պարտեալ եւ իսպառ լքեալ,
Իբր զապիկար հաշմեալ՝ հերկեցայ, կորեայ վանեցայ,
Վատնեալ ի բազմաց՝ ի մահ գրաւեցայ,
Վասն որոյ ի պարգեւական էն զրկեցեալ՝
Յողորմութեանն կողմ նայիմ…»
Բան ՁԶ – Բ (36–40)

Ամենազոր է Աստված, Նրա կամքի և կարողության գործադրման պտուղը հրաշքներ է գործում, ինչպես բորոտի պատմության մեջ, երբ ասաց. «կամենում եմ՝ սրբուի՛ր»[50] (Ղուկ., Ե-13): Ըստ Նարեկացու.

---

[48] *Տե՛ս նույն տեղում, էջ շիդ:*
[49] *Խրատանի ապաշխարության, էջ 310:*
[50] *Տե՛ս Նալեան, էջ ոխէ:*

«Արդ այսց երկուց բարգաւաճ շնորհաց նորոգչաց
Առ միմեանս եկեալ՝ կարելն ընդ կամելն,
Բարձեալ եղիցի եւ յուսահատութեանն վհատութիւն ազգաց մեղաւորաց»
Բան ՁԶ – (բ - 47–49)

Ապաշխարության գործում ամենակարևոր խնդիրը, սակայն, «մեղաց տեսութեան» հետ է առնչվում: Բորոտի մաքրության գործում կարևոր էր նաև այն, որ նա տեսնում էր իր հիվանդ, ողբալի, զազրելի ու ողորմելի վիճակը: Եվ անտանելի իրավիճակը ստիպում էր նրան ողբալ, արտասվել, աղաղակել ու Աստծուց բժշկություն խնդրել: Հոգեկան մեղքերի տեսության հարցը կամ հոգևոր բորոտության զգացողությունը պայմանավորված է Ս. Հոգու շնորհական լուսավորության աստիճանով, և ինչքան լուսավորված է աղոթականը, այնքան ավելի է տանջվում իր սրտի բորոտության պատճառով: Ամեն դեպքում, եթե հոգևոր վերանորոգության խնդիր է դրված, ապա Ս. Հոգու շնորհը կարող է գործել միայն սգավորության հոգևոր միջավայրում[51]*: Ըստ Հովհան Մանդակունու՝ «…քանզի վերքերիս ցավերը հարկադրում են ինձ պատմել, և իմ աղետների վարանումները ստիպում են ինձ պաղատել, մեղքերս լալ և վերքերս բժշկել»*[52]*:*

Այլ խոսքով, Աստված իր խոստացած Երկնքի Արքայության համար ողբի և արտասուքի գին է պահանջում[53]*.*

«…վաճառաշահութիւնք ողբոց եւ արտասուաց զերկինս գրաւեն»
Բան ՀԹ – (դ-93)

Լուսավորված լինելով Ս. Հոգու շնորհներով, Նարեկացին շատ խորն է ընկալում մարդու ողբերգությունը: Մի կողմից բյուրավոր մեղքեր՝ գործված մտքով, խոսքով ու գործով, սրտից բխող չար խորհուրդներով, մարմնական մտածումներով, մյուս կողմից անխուսափելի մահ, Աստծո առջև «կանգնելու անկարողություն», ամոթ, աշխարհի վերջ և Ահեղ Դատաստան, որ մեղսասերներին ու «անմաքուրներին» պիտի դատապարտի հավիտենական տանջանքների կամ դժոխքի… անելանելի բարդ իրադրություն, երբ փրկության հույսը, մարդկային առումով, նվազագույն է՝ նման կետի փորում գտնվող մարգարեի կացությանը:

Այսպիսի փակուղուց դուրս գալու համար մեծ իմաստասերը ելք է որոնում՝ դիմելով ս. Մարիամ Աստվածածնին (Քրիստոսի ամենամերձավոր անձին ու սրբին)՝ մեծ հավատ ընծայելով նրա բարեխոսության զորությանը.

---

[51] Տե՛ս նաև Վ. Լ ա լ ա յ ա ն. նշվ. հոդվ., էջ 25–26:
[52] Տե՛ս Խրատանի ապաշխարության, էջ 310:
[53] Տե՛ս Ն ա լ ե ա ն, էջ զճդ:

«Եւ արդ, ի վերայ այսքան յուսահատութեանց
Եւ ահարկու սրտաբեկութեանց…
Տագնապեալ ոգով…
Աղաչեմ զքեզ, սուրբ Աստուածածին, …
Ընկալ զմաղթանս այսր աղերսանաց քում դաւանողիս …
Հիւսեա միացո՛ զմեղուցելոյս դառն հեծութիւն
Ընդ քումդ երջանիկ եւ խնկաւորեալ հայցուածոց … «
Բան Զ – (ա - 1–2, 4–5, 19, 22–23),

«Զի թեթեւասցի կատարածն իմ ինձ՝ ծանրացելոյս անաւրէնութեամբ,
Արտասաուաք աւգնեա վտանգեցելոյս, գովեալդ ի կանայս,
Ծունր խոնարհեցո առ իմ հաշտութիւն...
Փառաւորեա՛ զՈրդիդ քո ի քեզ՝
Աստուածաւրէն ինձ հրաշագործել քաւութիւն եւ ողորմութիւն»,
Բան Զ – (բ - 32, 38–39, 42–43)

Մարդ–Աստված հարաբերության ոլորտում կարևոր միջնորդներ ու բարեխոսներ են նաև հրեշտակները: Ըստ Եփրեմ Ասորու՝ ս. հրեշտակների դասերը կարող են օգնել ճգնավորին՝ մեղքի և դիվային զորությունների դեմ պայքարում[54]: Ըստ Նարեկացու.

«Սոքա բարեխաւսք, հանդերձիչք, այլ եւ խնամակալք,
Որ դեգերին հանապազ առ մեզ՝
Ընդ մերում կրիցս կարեկցելով...»
Բան ՁԱ – (ա - 19–20, 23–24, 34–36)

Նարեկացին Աստծո ողորմությունն է հայցում նաև իր պահապան հրեշտակի միջնորդությամբ.

«Որովք եւ ինձ՝ մեղաւորիս հողեղինի
Մարդասիրեսցես ողորմել, Յիսուս,
Աղաչանաւք իմոյն հրեշտակի …»
Բան ՁԱ – (գ - 61–63, 65–66)

Ինչպես քրիստոնյա բոլոր սրբերին, այնպես էլ Նարեկացուն բնորոշ է գերմարդկային մեծահոգությունը, որը երևում է հատկապես իր թշնամիների հանդեպ սիրո վերաբերմունքից (նրանց համար նա աղոթում է Բան ՁԳ-ում): Ըստ Հովհան Ոսկեբերանի՝ աղոթքի ժամանակ եթե չներենք մեր անձի դեմ չարիք գործածներին, ապա ինքներս մեզ կվնասենք,

[54] *Տե՛ս Խրատանի ապաշխարության, էջ 273:*

իսկ Աստծուց թողություն կստանանք (ըստ «Հայր մեր»-ի), եթե ներենք նրանց[55]: Ըստ Նարեկացու.

«Յիշեա՛ յայսմ ողբերգութեան մատենի բանիս խոստովանութեան
Եւ զոր ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝ ի բարի,
Եւ արա՛, կատարեա՛ նոցին քաւութիւն եւ ողորմութիւն»
Բան ՁԳ – (ա - 11–13)

Հետևելով Քրիստոսի անոխակալ վարքին, նախ նրանց համար բարի պարգևներ է խնդրում (ինչպես քաղցածներին հաց կտար, իսկ ծարավածներին՝ ջուր), որպեսզի հրախառը սիրո կայծակով հանդարտեցնելով, նրանց վերափոխի[56]: Սա արդեն «հնարավորություն կտա», որ Աստված ևս (նրանց) մեղքերին թողություն տա (խոսքը հիմնականում իր հանդեպ գործած մեղքերին է վերաբերում).

«Մի՛ բարկացիս նոցա վասն իմ, տէր,
Իբրեւ զսուրբս բամբասողաց,
Առ յաճախ սիրոյդ, որ ի յիս,
Այլ որպէս զչարս կշտամբողաց եւ իրաւամբք նախատողաց՝
Ներեա՛ յանցանաց նոցա»
Բան ՁԳ – (ա - 14–18)

Քրիստոսից տրված «նոր օրենքի» պատվիրանը իրագործելով (ըստ այն խոսքի, որ եթե ձեր նկատմամբ մեղք գործողներին չներեք, ձեր երկնավոր Հայրն էլ՝ ձերը չի ների. հմմտ. Մատթ, ԺԸ-35), Նարեկացին նաև Աստծո առաջ պատճառաբանում է իր անձի համար նրանց թողություն տալու անհրաժեշտությունը.

«Եւ արդ, մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի Քո, արդարադատ
Ոմանք առ մեզ վնասակարագոյնք սակաւուք,
Թերեւս եւ յիրաւի բամբասելոցս,
Եւ ես առ Քեզ, ամենապարգեւ,
Անթիւս եւ անկշռելիս բազմաւրինակ ուխտազանցութիւնս»
Բան ՁԳ – (ա - 19–23)

Վերջապես նա Քրիստոսից խնդրում է ոչ թե իր թշնամիների սատակումը, այլ՝ փոխարկումը գայլերից գառների[57].

---

[55] *Տե՛ս նույն տեղում, էջ 234:*
[56] *Տե՛ս Ն ա լ է ա ն, էջ ոլդ:*
[57] *Տե՛ս նույն տեղում, էջ 634:*

«Եւ Դու առ Քոյս, ըստ Քում մեծութեանդ,
Անճառելիս հրաշագործեսցես
Մի՛ սատակեսցես զիմսն խածանողս, այլ փոփոխեսցե՛ս»
Բան ՁԳ – (բ - 27–29)

Մարդն իր հոգեկան կարողություններով, առանց Ս. Հոգու շնորհի լուսավորության, անկարող է ներթափանցել սեփական ներաշխարհի խորխորատները՝ կատարյալ խոստովանության «բարձունքներին» մերձենալու համար: Այս խնդրով ևս Նարեկացին Աստծո օգնությունն է հայցում.

«Ողորմեա՛ Հոգւոյդ Քոյ իմաստութեամբ
Զհաջողուած ձեռինս գործոյ՝
Ընդ հեծութեան ձայնիս մաղթանաց»
Բան ՁԵ – (ա - 6–8)

Ըստ Նալյանի մեկնության՝ խնդրում է Աստծուց, որպեսզի իր գրվածքները համապատասխան լինեն սրտի հեծությանը[58]:

Ոչ միայն մարմնի, այլև հոգու բնությունն իր անվերահսկելի դյուրագայթությամբ, մեղքի նստվածք է առաջացնում մարդու սրտում: Դրանք երևակայության, անխոհեմ մտքերի, հիշողության, սրտի ցանկությունների և զանազան ճանապարհներով մարդկային հոգի սպրդած մեղքերն են, որոնց խոստովանությամբ աղոթականը ձգտում է ձերբազատվել նան մեղքերի այս բեռից՝ հայցելով Ս. Հոգու բժշկարար և սրբարար զորության ներգործությունը: Ըստ Իսահակ Ասորու՝ սատանան փոքր մեղքերը մարդու աչքին չնչին մի բան է ցույց տալիս, որպեսզի ավելի մեծ մեղքերի մեջ գցի նրան[59]: Այս դեպքում, Նարեկացին կամենում է ազատագրության հասնել մարտիրոսների բարեխոսությամբ.

«Ընկալցիս մարտիրոսացն պաղատանաւք
Ի հոտ հաճութեան բուրման անուշից …
Բժշկեա՛, ամենակարող, զներքինս եւ զարտաքինս,
Զտիպքն եւ զգիծքն եւ զխարանս հարուածոցն՝
Բարձեալ եւ մաքրեալ դեղովք ողորմութեանդ
Զկտեալ խածուածս բազմագունիս,
Որք գարշելիս ընդ ախորժելեացն
Քեզ ցուցանեն զէութիւն բնութեանս»
Բան ՁԷ – (բ - 36–37, 39–46)

[58] *Տե՛ս նույն տեղում, էջ 642:*
[59] *Տե՛ս Խրատանի ապաշխարության, էջ 293:*

Քրիստոս Խաչի վրայից ոչ միայն ներում էր Իր թշնամիների մեղքերը (տե՛ս Ղուկ. Իգ - 34), այլև իջնելով դժոխք՝ փրկում է դժոխաբնակ մեռյալ հոգիներին (Զաք., Թ-11). «Իսկ Դու արեամբ կնքուած ուխտի համար պիտի արձակես քո գերիներին իրենց անջուր գբից»[60]: Նարեկացին իր հոգին էլ է (մարմնի մեղքերով) մեռած համարում ու կարոտ Աստծո ողորմության[61].

«Զի ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝
Շնորհաւք Քո, գթած, ի Քեզ զաւրացեալ՝ Քեւ նորոգեցայց,
Զատեալ ի մեղաց անմահ կենդանութեամբ՝
Ի յարութեանն արդարոց, Հաւր Քում աւրհնեցեալ»:
Բան ՂԵ – (գ - 44–47)

Ի վերջո, անկախ մարդկային ճիգերից, Նարեկացին Քրիստոսի պատվական Արյամբ է ուրվագծում մարդու ներքին ազատագրման ընթացքը: Ըստ Գրիգոր Լուսավորչի՝ ճշմարիտ խոստովանողներն ու ապաշխարողները մեղքերից սրբվում են Քրիստոսի փրկավետ Մարմնով ու Արյամբ, քանզի դա է հավատացյալների քավությունն ու փրկության հույսը[62]: Ըստ Նարեկացու.

«Եւ վասն Արեանդ պատուականի՝ …
Թողցի՛ն պարտիքն, ապաքինեսցի՛ ամաւթն,
Բարձցի՛ն վտանգք մեղուցեալ դատապարտելոյս,
Մոռասցի՛ն պատկառանքն, բարեգործեսցի՛ն դատակնիքն,
Սատակեսցին որդունքն, վերասցի՛ լալն…»
Բան ՂԵ – (բ - 21, 23–26)

«Սատակեսցին որդունքն…» (տող 26) ըստ Նալյանի՝ խոսքը չար խղճմտանքի կամ Վերջին Դատաստանից հետո դատապարտյալների համար «պատրաստված» անքուն որդերի մասին է, քանի որ ինչպես որդերն ու զեռուններն ընկնելով յուղի մեջ՝ սատկում են, այնպէս էլ ս. Պատարագի յուղի շնորհը ջերմեռանդների ու զղջացողների հոգու մեջ հեղվելով, սպանում է նրանց խղճմտանքի անքուն ու թմրած որդերը[63]:

Մեղքերից հեռացումը և առաքինության մեջ հաստատվելը կամ բարեպաշտության ուղին ընտրելը ևս Աստծո ողորմածության արդյունք է, որ նման է ս. Հաղորդության

---

[60] *Տե՛ս Ն ա լ է ա ն, էջ 674:*

[61] *Տե՛ս նույն տեղում:*

[62] *Տե՛ս Խրատանի ապաշխարության, էջ 250:*

[63] *Տե՛ս Ն ա լ է ա ն, էջ ոհգ: Անքուն որդերի մասին տե՛ս Վարդան Այգեկցու քարոզը. «Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության», աշխ. Պ. Խաչատրյանի, Հ. Քեռսեյանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 550–552:*

պարգևած շնորհներին, երբ Քրիստոսի Արյան ու Մարմնի ճաշակումը «արժանավորին» կյանք է տալիս՝ մեղքերի թողություն և քավություն[64].

«Եկեսցե՛ն գթութիւնք կամողիդ,
Եւ պարգեւողիդ կենաց ամենից,
Ծագեսցի՛ լոյսդ, արագեսցէ փրկութիւնդ…»
Բան ՂԵ – (գ - 32–34)

Այսպես, ապաշխարության խորհրդաբանությունն իր բարձրակետին է հասնում ս. Հաղորդության Վերջին Ընթրիքով. «Առէք կերայք, այս է Մարմինն իմ… Արբէք ի դմանէ ամենեքին, զի այդ է Արիւն իմ...» (Մատթ., ԻՁ-26): Այսինքն, ս. Հաղորդություն ստացողները ապաշխարությամբ քավում են նաև իրենց մեղքերը և թողություն ստանում[65]*:*

МИСТИКА ПОКАЯНИЯ В «КНИГЕ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ» ГР. НАРЕКАЦИ, В КОММЕНТАРИЯХ ПАТРИАРХА АКОБА НАЛЯНА

ВАГРАМ ЛАЛАЯН

Резюме

Мистика покаяния раскрывает истинную цель «Книги скорбных песнопений», то есть соединение с Богом путем покаяния. Согласно определению патриарха Акоба Наляна, раскаяние, исповеди и покаяние маловерующего утверждают в вере, отчаявшегося утверждают в надежде, а отдалившегося от любви к Богу утверждают в добродетели любви. То есть, раскаяние сердца, непрестанные исповеди, скорбь, слезы, стоны и стенания смогли бы, пожалуй, удовлетворить предварительным условиям воссоединения с Богом, с верой, надеждой и любовью. Однако Григор Нарекаци просит также заступничества Богоматери, апостолов, святых, подвижников, мучеников и Божьих ангелов. Только так сможет мистик в священном страхе приблизиться к Св. Причастию, которое очищает от всех грехов и обожествляет природу человека.

[64] *Տե՛ս Ն ա լ է ա ն, էջ 673:*
[65] *Տե՛ս նույն տեղում, էջ 387:*

MYSTICISM OF CONFESSION IN THE "BOOK OF LAMENTATION" OF GR. NAREKATSI IN HAKOB PATRIARCH NALIAN'S COMMENTARIES

VAHRAM LALAYAN

S u m m a r y

The mysticism of confession reveals the authentic goal of the "Book of Lamentation", that is to say union with God through confession. According to the definition of Patriarch Hacob Nalian, repentance and confessions strengthen the faith of those who have little faith; they strengthen the hope of the desperate, and the virtue of love in those who moved away from the love of God. That is to say that repentance of the heart, incessant confessions, mourning, tears, groaning and moaning could satisfy the preliminary conditions of union with God with faith, hope and love. Nevertheless, Grigor Narekatsi prays also for the intercession of the Holy Virgin, the Apostles, saints, hermits, martyrs and God's angels. That is the only way through which the mystic can approach in sacred fear the Holy Communion which purifies from all sins and divinizes the human nature.